



“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆՐ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳՈՆ” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺԲ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆՈՒԱՐ 1, 1883

ԹԻԻ 1



ԵԿԵՂԵՑԻ ՄԸ Ի ԼԱՐՈՆՈՍ

ԼԱՐՈՆՈՍՅԻՔ ՈՐ ԵԿԵՂԵՑԻ ԿՆՐԹԱՆ

Վերի պատկերը կը ցուցնէ տեսարան մը որ շատ անգամ կը տեսնուի Լարոնիոյ մէջ ձմեռ. ատեն : Գիւղացիք եկեղեցի կ'երթան միաբանութեամբ Աստուծոյ պաշտօն մատուցանելու համար : Ու գեոր մը, որ Լարոնիա գաղտնէ, կ'ըսէ թէ շատ հաճութեամբ տեսաւ հոն որ Լարոնիացիք հրապարակային պաշտօնի ներկայ դանուելու մասին մեծ փոյթ ունին : Ասոնք երբեմն պաշտօնի կու գան նաւակներով իրր երեսուն մըն, այսինքն տասը ժամ հեռուէն, և անոնք որ հետի կամ դահուկնե-

րով կու գան, շատ անգամ մղոններով ճամբայ կը քայնեն : Որովհետեւ պաշտօնի ներկայ դանուելու համար տղաւի երկար ճամբայ քալել հարկ է, Լարոնիացիք յաճախ չարաթ որ կը մեկնին իրենց տաներէն, և գիշերը կ'անցունեն եկեղեցւոյ մտ գըպրատան մէջ, որ կը գործածուի հեռու որ տեղերէ եկող անձանց բնակութեան համար : Այսպիսիք իրենց հետ կը բերեն կերակուր և կերակուր եփելու անօթներ, մանաւանդ արձամաններ, վտան զի Լարոնիացիք

չատ կը սիրեն սուրճ : Պատկերին առջևի կողմը կը տեսնուին ձիւնի տունն հագնելու սուրճի աման, կողով մը և դաւազան : Այս սուրճի ամաններն են այնպէս երկար և լայն որ զանոնք հագնուողը խոր ձիւնի երեսէն կը քայլէ, և ձեան մէջ չընկղմիր : Կը տեսնուին նաև դահուկ, շուն և բէն կոչուած եղջերու, և գիւղացիք իրենց տարուկ մուշտակներուն մէջ պատասպարուած, և այսպէս կը ներկայացնեն տեսարան մը որ բացի Լարոնիայէ ուրիշ երկրի մէջ չտեսնուիր : Աւելի քան յիսուն տարի առաջ

Լաբոնիացիք կռակապաշտ էին : 1714 Էն մինչև 1774 Գանիացիք աշխատեցան ի ֆրիստոնեկութիւն բերել զԼաբոնիացիս , բայց անոնք մեծ սխալմունք ըրին շանալով թողուլ տալ Լաբոնիացոց իրենց լեզուն և գործածել Գանիական լեզուն իրենց գաղտնիքներուն մէջ : Լաբոնիացիք իրենց լեզուն յարեալ մնացին , և 1837 ին Լաբոնիացոց լեզուաւ գիրքեր հրատարակուեցան : Այն ասանէն ի վեր արագ յառաջադիմութիւն եղած է անոնց մէջ : Հիմա բոլոր Սորբ գիրքը Լաբոներէնի թարգմանուած է , և Լաբոնիացիք են ֆրիստոնեայ ժողովուրդ :

**ՅԻՍՈՒՍ ՄԱՆՈՒԿՆ Ի ՏԱՃԱՐԻՆ**

Հասանք դարձեալ տարւոյն այն մասին որ , բոլոր ֆրիստոնեայ ազգաց մէջ , կը համարուի իրրեւ տարեգարձ ծննդեան փրկչին մերոյ Յիսուսի : Մեր մանուկ ընթերցողք կրնան խոհոյն հասկնալ թէ ինչ կը ցուցնէ մեր պատկերը : Գիտենք որ Յիսուս անգամ մը , մինչ երկոտասանամեայ էր , զնաց Երուսաղէմ Յովսեփու և Մարեմայ հետ : Ասոնք ի դարձին իրենց քաղաքը ճամբան չտեսան զՅիսուս իրենց հետ , և ի սկզբան հոգ չըրին , համարելով զնա բարեկամներու կամ դրացիներու հետ որ ետեւէն կու գային : Բայց երբ թեւան հասնելով չը գըտան զՅիսուս կարուանին մէջ , մեծ անձկութեամբ դարձան Երուսաղէմ , և երկար վնասուելէ ետքը գտան զՅիսուս տաճարին մէջ , ուր վարդապետներու հետ նստած էր նա և կը խօսէր : Յիսուս պատանեկին իմաստութիւնը կը զարմացունէր Հրէից վարդապետները : Կատարեալ էր Յիսուս միշտ . ոչ միայն երբ չափահաս մարդ եղաւ , այլ և մինչդեռ մանուկ և պատանի էր : Յիսուսի վարուց մէջ դիտողութեան արժանի գլխաւոր բանը սա է , որ թէպէտ ունէր նա կարողութիւն միով բանիւ մեծ բազմութիւն մը կերա-

կրել , մեռեալ յարուցանել , և ասոնց նման սքանչելի գործեր ընել , երբէք իւր այս մեծ զօրութիւնը չվարեց ի գործ ի պաշտպանութիւն անձին ընդդէմ թշնամեաց , կամ հնազանդեցունելու զմարդիկ իրեն :


Այս թերթին միւս երեսին պատկերը յայտնի կը ցուցնէ Յիսուսի այս ողւոյն ճիշդ հակառակը : Այս պատկերին մէջ կը տեսնուին Յիսուսի աշակերտ կոչուածներէ ոմանք , որ ու-

տոնեայ աշխարհ համոզուած է . թէ այսպէս բռնութեամբ վարուիլ տարբեր կարծիք ունեցողայ հետ ի հաւատոյս՝ հակառակ է մեր փրկչին Յիսուսի ողւոյն և օրինակին : Մանաւանդ թէ անհնար է քանչ և աչտայ ընդունել տալ այլոց այս ինչ կամ այն ինչ հաւատաբը : Մարդիկ կը հաւատան , եթէ պարտաւերջ հանդէսն թէ այս ինչ հաւատաբը ճշմարիտ է : Քրիստոս կը սիրէ ամէն մարդ , կը բազձայ որ ամէն մարդ սիրէ զնա և ըլլայ անոր աշակերտ , բայց ֆրիստոս չուզեր ամենին բռնադատել զոք արտաքին միջոցներով , այլ կը պատուիրէ իւր խօսքը քարոզելով համոզել մարդիկ :

Արդ , որովհետեւ այս տարի ևս եկանք Քրիստոսի ծննդեան տարեդարձին , ուրախանանք որ Յիսուս եկաւ յաշխարհ փրկել զմեզ , ջանանք նմանիլ անոր , և անոր Աւետարանին միջոցաւ համոզել ուրիշ մարդիկ աշակերտել Յիսուսի :

**ՄԱՀՈՒՄՆ ՎՐԱՅ**

Մնցեալ որ կանչուեցոյ փոքրիկ տղու մը յուզարկաւորութեան : Աղէկ կը ճանչնայի այս տղան որ շատոնց հիւանդ եղած չէր , բայց մտաբեր հիւանդացաւ , և հիւանդութեան լուրը մեղի չհասած՝ մեռաւ : Երբ գացի , տեսայ մեռած մանուկն իբր ողջ իւր փոքրիկ դագաղին մէջ , որպէս թէ ննջելու հա-



ՅԻՍՈՒՍ ՄԱՆՈՒԿՆ Ի ՏԱՃԱՐԻՆ

մար պառկած էր այն փոքրիկ անկողինը , և քիչ ետքը պիտի արթննար : Բայց ոչ այնպէս . փոքրիկ տղան վերցաւ մարդոց մէջէն , այսինքն անոր մարմինը , քանզի հոգին զնաց ընակել Յիսուսի հետ :

Մահուան վրայ ինչու համար կը խօսիմ ձեզ , տղայք : Ոչ թէ վասն զի դուք ևս պիտի մեռնիք այն տղուն պէս վաղ , կը յուսամ մանաւանդ թէ ձեռն շատերը որ կը կարդան այս տողերը՝ պիտի ապրին երկար : Բայց այս սիրելի տղուն մահը սոցայոց անգամ կենաց անստուգութեան դաղափարն


րիշ երկու հոգւոյ գործակցութեամբ կը տանջեն տարբեր հաւատք կամ վարդապետութիւն ունեցող մը : Այս թշուառ մարդը կարկերով ճախարակաւոր գրաններու վրայ՝ կը պարպատեն անոր ոսկրները , որպէս զի առ ցաւոյն ստիպուի հաւատալ ինչ որ իրեն հրաման կ'ըլլայ : Ժամանակաւ իշխանութեան տէր անձինք այսպէս բռնութեամբ կը ստիպէին հերետիկոս կարծուած մարդիկ ընդունել իրենց իշխանաց կրօնական կարծիքները : Բարեբախտութեամբ հիմա բոլոր ֆրիս-

արթնացուց մտքիս մէջ: Ուստի կ'ուզեմ նաև ձեր գաղափարն արթնացունել այս կէտին վրայ:

Եթէ ձեր հայրը ուզէ երկայն ճամբորդութիւն մը ընել ձեզի հետ, ո՛չ ապաքէն կ'ուզէք առաջուց գիտնալ, որպէս զի ճամբորդութեան համար ամէն հարկաւոր պատրաստութիւն տեսնէք: Կարծեմ չէք ուզեր անպատրաստ գտնուիլ այն օրը որ պիտի ելլէք ճամբայ: Արդ, ամէնքս գիտենք անտարակոյս թէ կանուխ կամ անագան պիտի մեռնինք քր մը, և որովհետև երկայն ճամբորդութիւն մը պիտի ընենք դէպ ի յախտենականութիւն, միթէ իմաստութիւն չէ պատրաստ գտնուիլ միշտ այն օրուան:

Գիտցած ըլլաք, որ զայք, որ աղէկ կ'ապրի այն որ միշտ պատրաստ է մեռնելու: Եթէ դուք, որ դեռ տղայ էք, պատրաստ գտնուիք այն երկար ճամբորդութիւնն ընելու դէպ ի յախտենականութիւն, աղէկ կ'անցունէք աշխարհիս վրայ ձեր կեանքը: Քանզի այն օրուան համար պատրաստ գտնուիլ կը նշանակէ սիրել զՅիսուս, ապաւինել անոր, և այնպէս աներկբայ ըլլալ յախտեան երջանիկ ըլլալու անոր հետ: Այս է ստուգիւ որ զմեզ երջանիկ կ'ընէ աշխարհիս վրայ: Արդարև զարմանալի պիտի թուի ձեզ

ինչ որ պիտի ըսեմ, բայց ճշմարիտ է. չենք կրնար երջանիկ ապրիլ երկրի վրայ, եթէ պատրաստ չենք բռնել զմեզ մահուան: Մահուան պատրաստ գտնուիլը մեր կեանքը օր մը անդամ չկարճեցունենք և ոչ կը տխրեցունեն զմեզ, նա մտնաւանդ ուրախ և զուարթ կ'ըլլանք միշտ, վասն զի գիտենք թէ պատրաստ ենք այն երկար ճամբորդութիւնն ընելու, երբ և հաճոյ թուի մեր երկնաւոր Հօրը կանչել զմեզ իրեն: Ոչ ոք, փոքրիկ մանուկ մը անգամ, կրնայ երջանիկ ըլլալ, եթէ անպատրաստ տեսնէ զինք մահուան, գիտնալով թէ ամէն րոպէ կրնայ կանչուիլ այն ճամբորդութիւնն ընելու: Զմտնալով որքան թէ երջանիկ ապրելու համար հարկ է միշտ պատրաստ գտնուիլ մահուան:



ՓՈՒՔՐԻԿՆ ՏԻՔԻ ԵՒ ՀՄԱՅՆ

Ի՞նչ զուարթ էր փոքրիկն Տիքի, նա սովոր էր շրջիլ բոլոր օրը աստ և անդ ուրախութեամբ երգելով: Օր մը փոքրիկ Տիքի գնաց անտառը, որ շատ հեռի չէր իւր բնակարանէն և իւր քաղցր երգերովն կը հնչեցնէր անտառը:

Վերջապէս հասաւ ականակիտ վրտակի մը գլուխ, որ անտառին մէջ կը հոսէր հեղիկ, և որովհետև ծառաւի էր, հոն կանգ առաւ շուր խմելու: Բայց ճիշտ այս վայրկեանն յանկարծ ետևի կողմէն մէկը բռնեց զայն, Տիքի աչքը բացաւ և դտաւ զինք բարձրահասակ հսկայի մը ձեռք, որ շատ մեծ էր քան զինք: Հսկայն յոյժ ու-



ՀՄԱՅՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՆՅԱՐ

րախտութեամբ նայեցաւ անոր վրայ, յետոյ մեծ տոպրակի մը մէջ դնելով զայն կը տանէր:

Խեղճ Տիքի բոլոր զօրութեամբ կը ճղներ տոպրակէն դուրս ելլել, բայց ի գո՛ւր: Կը ճչէր ու կը տագնապէր, կը ջանար պատուել տոպրակը, մինչ հսկայն անոր յուսահատ ճգանց վրայ ծիծաղելով կը տանէր զայն:

Վերջապէս հսկայն հասաւ իւր տունը: Ի՞նչպիսի մթին տեղ մ'էր այն դժբախտ Տիքիին համար: Խեղճը մեծ դառնութեամբ տեսաւ բարձր պատերով շրջապատեալ այս տխուր վայրը, ուր ոչ մի ծաղիկ կը գտնուէր և ոչ մի ծառ: Երբ ներս մտաւ հսկայն, դուռը գոցեց և զՏիքի տոպրակէն դուրս հանեց:

Թշուառ բանտարկեալը հիմա խորհեցաւ թէ իւր ժամանակը հասած

էր, քանզի աչքերը շուրջը գարձնելով տեսաւ կրակի հնոց մը և անոր առջև երկու տարաբախա զոհեր, մեծագոյն քան զինքն, որ կը խորովէին հսկային ճաշ ըլլալու համար: Հսկայն մեկէն չապանեց զՏիքի, սյլ արգելեց զայն բանտի մը մէջ, զոր յառաջագոյն պատրաստած էր անոր համար: Բանտը շատ մութ էր, նիգելով և ձողերով շրջապատեալ: Հոն Տիքիի կերակուրն էր կտոր մը չոր հաց և գաւաթ մը շուր միայն: Տիքի անպատմելի անհասկատութիւն մը կը զգար, ուստի երբեմն իւր գլուխը կը զարնէր ուժգին զինք շրջապատող երկաթէ ձողերուն, և երբեմն իբր թէ փախչիլ փորձելով ետ ու առաջ կը վազէր իւր անձուկ արգելարանին մէջ:

Հեռեւեալ օրը հսկայն Տիքիին տեսնելու եկաւ, և տեսնելով որ նա հացէն բնաւ կերած չէր, սրամտելով բռնեց փոքրիկ գլուխէն և հացի կտոր մը բռնի անոր բերնէն ի վար հրեց: Խեղճ Տիքի այնքան վախցած էր որ ուտելու և խմելու ակորժալ կը բողբոլիկն կորուսած էր:

Միւս օր Տիքի բոլորովին առանձին ձգուեցաւ իւր խաւարամած բանտին մէջ, և այն օրը ակտուր օր մը եղաւ անոր համար: Ողորմելի արարածը կը յիշէր իւր հայրենի սիրելի բնակա-

րանը իւր ընկերները, շողջողուն արեւը, դարարագեղ ծառերն ու քեփոյշ ծաղիկներն և այն ամէն համեզ բաներն զորս ինք սովոր էր ուտել:

Այս քաղցր յիշատակները Տիքիի փափուկ սիրտը կարեւելք կը խոցէին, ուստի մերթ յաւազին աղաղակներ կը հանէր և մերթ իւր արգելարանէն պրծելու ունայն փորձերով կը զարնուէր երկաթեայ որմերուն և անհրանարին կը վիրաւորուէր:

Հսկայն նորէն եկաւ, և կը ստիպէր զՏիքի որ ըստ իւր սովորութեան երգէ ու զուարճանայ: «Նրգէ՛, երգէ՛, երգէ՛» կը գոչէր, բայց Տիքի այնչափ տրտում էր որ անհնար էր անոր երգել: Բանտը, ո՛հ, չէր այն վայրը, ուր կարենար երգել: Վերջապէս հրակայն բարկացաւ, և զՏիքի դուրս հանելով կատաղաբար կը բռնադատէր

զնա որ երգէ : փոքրիկն Տիբի բարձր ճիչ մը արձակեց , տազնապ մը սրբ-տաճմիկ , և ահա շունչը փչած էր հսկային ճանկերուն մէջ :

Այս պատմութիւնը ճշմարիտ է : Խեղճ Տիբի էր Գորգի Բաշա մը , և հսկայն էր Գորգի Բաշա մը :

Ո՛հ , մի՛ մարեք թռչնոյն արև ,  
Որ ծառոց մէջ կը շողայ .  
Վարդի թփին նստի վերև ,  
Երգ ու ցօղեր կը անդայ :

'Թէ՛ չըքսնան թռչնոց կեանքեր ,  
— Ա՛հ , կեանք անմեղ ու սիրուն —  
Յայնժամ՝ արխուր կ'ըլլան լ'աւեր  
Մեր սիրտ , երգեր ու դարուն :

Պարտիզակ Թարգմանեաց յԱնգղիերէնէ  
ՏՕՆԻԿ ՅԱԿՈՒԵԱՆ

ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ

Սէնթ. Անգամ մը Պար. Կարապետ իւր տասը տարեկան քեռորդին նպա-րավաճառին զրկեց ստակ տարու համար : Պար. Կարապետ նը պարավաճառին 17 դահեկան պարտքու-նէր , և քեռորդույն մէ՛ ճիտիյէ մը տուա : Սարգիս , այս էր Պար. Կարապետի քեռորդ-ւոյն անունը , զնայ , և մէ՛ ճիտիյէն նպա-րավաճառին տարով երեք դահեկան եա առա : Երբ Սարգիս տուն եկաւ , մօրեղ-բայրը չփնտեց մը-նացեալ ստակը : Սար-

գիս մեծ փորձութեան մէջ էր այն ստա-կին մասին , և ինքնին ըսաւ . « Այս ստակը մօրեղբորս տամ , թէ սպասեմ մինչև որ ան ինէ ստակն ուզէ : Եթէ մօրեղբայրս ստակն ուզէ , կու տամ . իսկ եթէ չուզէ , ինչո՞ւ պիտի տամ . քովս կը պահեմ , և ստակը իմն կ'ըլ-լայ : » Այսպէս խորհելով ստակն եա չտուա :

Վախճան . Այս դէպքին վրայէն տասը տարի անցաւ : Սարգիս զրազիր եղաւ վաճառականի մը քով : Երեկոյ մը գործոցին մէջ տեսաւ քանի մը լերա որ դրամարկը դրուած չէր : Սարգիս այն ստակն առաւ , գրպանը դրաւ , և տուն տարաւ : Ետքը հասկցուեցաւ թէ ստակը Սարգիս գողցած էր , ուս-տի բռնուելով բանա դրուեցաւ , և հիմա դեռ բանան է :

Սարգիս , երբ տասը տարեկան էր , մօրեղբօրը երեք դահեկանը իւր քով

պահելով , և երեք դահեկանի համար իւր ուղղութիւնը վաճառելով սկսա-բանել բանախն ճամբան : Հիմա բան-տին մէջ յանցաւոր և խայտառակ է : Մօրեղբայրը Պար. Կարապետ տարի-նէր առաջ մեռած է : Որբեայրի մօրը տան լոյսը խաւարած է , և մօրը սիր-աւ կտարած է : Բանասարկեալը գի-տէ թէ ի՛նչ բան էր որ զնա առաջ-նորդեց ի բանա :

Թող մի տար այն մեղաց անգամ որ թեթեւ կը թուին . նաև փոքր մեղք մը կը խտացունէ սիրտը , և մեծա-մեծներու կը տանի :

Համբերութեան համարադրթ է միշտ . առէն օր կը պատահին բաներ որոց համբերել պէտք է :



ՄԵՂԱՅՈՅՑ ԹՈՉՈՒՆ

ՄԵՂԱՅՈՅՑ ԹՈՉՈՒՆ

Այս փոքրիկ բայց դեղեցիկ թռու-չունը բնիկ Ափրիկեցի է , և իւր մէկ նշանաւոր յատկութենէն առած է այս անունը : Այս թռչունը շատ կը սիրէ մեղր , և երբ գտնելով ծառ մը որոյ բնոյն մէջ վայրի մեղրք մեղր շինած են , չկրնար մտնել հոն մեղրը ուտ-լու , մարդ մը կը կանչէ իրեն օգնու-թեան սա կերպով : Մարդուն ուշա-դրութիւնը կը հրաւիրէ իւր վրայ յա-տուկ ձայն մը հանելով , և երբ կը տեսնէ թէ մարդը կը դիտէ զինք , անոր առջև կը թռչի ծառէ ծառ , մինչև կու գայ այն ծառին որոյ մէջ մեղր կայ : Մարդը որ կը հասկնայ թռչնոյն միտքը , քանզի այն երկրին մարդիկ սորված են անոր բնութիւնը ,

կը սկսի կտրել ծառը , և թռչունը կը սպասէ հոն մտա ընդունիլ իւր վարձը , վասն զի ցուցուց մեղր պա-րունակող ծառը : Թռչունն ընդունած կ'ըլլայ իւր վարձքը , երբ մարդը քիչ մը մեղր կը թողու անոր համար ծա-ռին խոռոչին մէջ :

Կայ նաև փոքրիկ անասուն մը որ նոյնպէս կը սիրէ մեղր , և լսելով մեղ-րացոյց թռչնոյն ձայնը , կ'երթայ ա-նոր ետեէն , կը տեսնէ մեղր պարու-նակող ծառը և կը ծակէ զայն , և զայն ցուցնող թռչնոյն հետ ընկերու-թեամբ կը վայելէ այն պատուական մթերը :

« Հայր , » ըսաւ փոքրիկ աղջիկ մը , « ինչո՞ւ համար այսպէս յաճախ կը գո-վեն թշուառ էլիզայի բարութիւնը : Անոր նշանաւոր մէկ գործը չլսեցիք : »  
« Որդեակ , » ըսաւ հայրը , « քու կան-թեղը ի՞նչ կ'ընէ : »  
« Ոչինչ , հայր : »  
« Այնպէս է , որ-դեակ , կանթեղդ բան մը չընէր , բայց և այնպէս կը լու-ստուրէ բոլոր սեն-եակը : »  
« Թող ձեր լոյսը լուստուրէ մարդոց առջև , ըսաւ փոքրիկը , որպէս զի տեսնեն ձեր բարի գործերը և փառաստօրեն ձեր շայ-րը որ երկիրքն է : »

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Վաղուան մի թողուր բնաւ ինչ որ կրնաս ընել այսօր :

Այն բանին համար զոր դուն կըր-նաս ընել քեզի , նեղութիւն մի տար ուրիշի :

Ստակ ծախք մի ընէր զայն ձեռք բերելէ առաջ :

Բնաւ մի գնէր ինչ որ պէտք չէ քեզ , խորհելով թէ աժան է :

ԱԻԵՏԱԲԵՐՆԵՐՈՒ ԳԻՆԸ

ԱՄՍՍԿԱՆ ( Հայերէն բրտ , և Հայ . Տահերէն ) , փոսթայի ծախքով , տարին 6 դահեկան է :

Ստեփանյի Մեծնորաց ընկերութիւնը  
Իմբազիր  
Ֆիլճանճըր Եօգուչու . Ա. Ս.  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱՅՈՒՐ